## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ

**7 ՀՈՒՆԻՍԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ, N 123-Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 20 ԱՊՐԻԼԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 88-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածների «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների՝

***որոշում եմ.***

Հիմք ընդունելով ՀՀ Կադաստրի կոմիտեի 03/06/2022 թվականի, թիվ Կ-03062022-06-0076 կասեցման որոշումը.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի 20 ապրիլի 2022 թվականի, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-020-0037-0017 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ » թիվ 88-Ա որոշման առաջին կետում կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1.1 «**233000 /երկու հարյուր երեսուներեք հազար/ ՀՀ դրամ**»-ը փոխարինել «273900 / երկու հարյուր յոթանասուներեք հազար ինը հարյուր/ ՀՀ դրամ», իսկ «156.4»-ը՝ փոխարինել «184.3»-ով :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

2022թ., հունիսի 7,
ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ
## 7 ՀՈՒՆԻՍԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ, N 124-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-112-0437-0036 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու եվ (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու եվ հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշման՝

***որոշում եմ.***

Հիմք ընդունելով սեփականության իրավունքի պետական գրանցման 08092015-06-0013 վկայականը.

1. Ելնելով հասցեավորման օբյեկտի տեղակայման դիրքից և այլ հասցեավորման օբյեկտների նկատմամբ նրա տեղակայման առավելագույն համապատասխանությունից, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի կազմի մեջ մտնող Օձուն բնակավայրի կադաստրային քարտեզի 06-112-0437-0036 ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության 0,10575 հեկտար մակերեսով հողամասը և հողամասում առկա 38,8 քառակուսի մետր սպասարահը և 45.9 քառակուսի մետր մակերեսով կոմպրեսորային մոդուլը բաժանել հետևյալ առանձին մասի և տրամադրել հետևյալ փոստային հասցեները՝

1.1 0.03656 հեկտար մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասին և հողամասում առկա 38,8 քառակուսի մետր սպասասրահին և 45.9 քառակուսի մետր մակերեսով

կոմպրեսորային մոդուլին տրամադրել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի Օձուն գյուղի 40-րդ փողոցի, թիվ 34 փոստային հասցեն:

1.2 0.06921 հեկտար մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասին տրամադրել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի Օձուն գյուղի 40-րդ փողոցի, թիվ 34/1 փոստային հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2022թ., հունիսի 7,
ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ

**8 ՀՈՒՆԻՍԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ, N 125-Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-014-0005-0045 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային եվ գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու եվ (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու եվ հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշման՝

***որոշում եմ.***

Հիմք ընդունելով սեփականության իրավունքի պետական գրանցման 22102013-06-0011 վկայականը.

1. Ելնելով հասցեավորման օբյեկտի տեղակայման դիրքից և այլ հասցեավորման օբյեկտների նկատմամբ նրա տեղակայման առավելագույն համապատասխանությունից, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի կազմի մեջ մտնող Օձուն բնակավայրի կադաստրային քարտեզի 06-014-0005-0045 ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության 0,0855 հեկտար մակերեսով հողամասը բաժանել հետևյալ առանձին մասի և տրամադրել հետևյալ փոստային հասցեները՝

1.1 0.07875 հեկտար մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողերի գործառնական նշանակության հողամասին տրամադրել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի Այգեհատ գյուղի 1-ին փողոցի, թիվ 1/2 փոստային հասցեն:

1.2 0.00678 հեկտար մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողերի գործառնական նշանակության հողամասին տրամադրել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի Այգեհատ գյուղի 1-ին փողոցի, թիվ 1/3 փոստային հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2022թ., հունիսի 8,
ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ

**8 ՀՈՒՆԻՍԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ, N 126-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-014-0005-0034 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային եվ գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու եվ (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու եվ հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշման՝

*որոշում եմ.*

Հիմք ընդունելով սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ 2284937 վկայականը.

1. Ելնելով հասցեավորման օբյեկտի տեղակայման դիրքից և այլ հասցեավորման օբյեկտների նկատմամբ նրա տեղակայման առավելագույն համապատասխանությունից, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի կազմի մեջ մտնող Օձուն բնակավայրի կադաստրային քարտեզի 06-014-0005-0034 ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության 0,117 հեկտար մակերեսով հողամասը և հողամասում առկա բնակելի տունը և օժանդակ շինությունները բաժանել հետևյալ առանձին մասի և տրամադրել հետևյալ փոստային հասցեները՝

1.1 0.08057 հեկտար մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին և հողամասում առկա բնակելի տանը և օժանդակ շինություններին

տրամադրել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի Այգեհատ գյուղի 1-ին փողոցի, թիվ 2 փոստային հասցեն:

1.2 0.03643 հեկտար մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի Այգեհատ գյուղի 1-ին փողոցի, թիվ 2/1 փոստային հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2022թ., հունիսի 8,
ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ
## 09 ՀՈՒՆԻՍԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ, N 127-Ա

### ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԳԱԳԻԿ ԱՂՎԱՆՅԱՆԻ, ԳՈՀԱՐ ԱՂՎԱՆՅԱՆԻ, ԳԱՅԱՆԵ ԱՂՎԱՆՅԱՆԻ ԵՎ ԱԼՎԱՐԴ ԱՂՎԱՆՅԱՆԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի առաջին և երրորդ հոդվածների, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ և 42-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 51-54-րդ հոդվածների, 59-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության <<Քաղաքացիական օրենսգրքի>> 135-րդ, 189-րդ, 198-րդ և 202-րդ հոդվածների, <<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի՝

***որոշում եմ.***

հիմք ընդունելով քաղաքացի Գ. Աղվանյանի դիմումը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 1991թ. մայիսի 15-ի թիվ 1 որոշումը, անշարժ գույքի հատակագիծը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը՝ տրված 03/06/2022 թ., 30/07/2015թ.-ին, ՀՀ Կադաստրի կոմիտեի 08/06/2022 թվականի, N Կ-08062022-06-0069 կասեցման որոշումը.

1. Օձուն համայնքի կադաստրային քարտեզի 06-112-0062-0016 կադաստրային ծածկագրով, Օձուն համայնքի փողոց 4, նրբանք 2, թիվ 6 հասցեում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.09169 հեկտար մակերեսով բնակելի տան կառուցման և սպասարկման համար նախատեսված, փաստացի առկա սահմանազատված հողամասի, հողամասում գտնվող՝ այլ անձանց իրավունքները և օրենքով պաշտպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, մինչև 2001 թվականի մայիսի 15-ը օրինական կառուցված (կառուցվել է 1968 թվականին) 129.5 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տան և դրան կից բնակելի նշանակության օժանդակ շինությունների նկատմամբ օրենքի ուժով ճանաչել՝ որպես սեփական գույքը տիրապետող ֆիզիկական անձանց՝ Գագիկ Սեյրանի Աղվանյանի՝ ծնված 06.02.1968թ., Գոհար Սեյրանի Աղվանյանի՝ ծնված 12.08.1969թ., Գայանե Սեյրանի Աղվանյանի՝ ծնված 31.08.1970թ. և Ալվարդ Սեյրանի Աղվանյանի՝ ծնված 26.02.1974թ., ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը:

Վերոնշյալ անշարժ գույքը բավարարում է «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պայմանները, ինչպես նաև կառուցված չեն և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Հողամասի և բնակելի տան նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:

2. Անշարժ գույքի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Սույն որոշմամբ սահմանված սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Օձուն համայնքի ղեկավարի 03 հունիսի 2022 թվականի, թիվ 115-Ա որոշումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրը:

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

**2022թ.,հունիսի 9**
**ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք,գ. Օձուն**